№ 51 Մարտի 20 (Ապրիլի 1) 1881 Մարտի 20 (Ապրիլի 1) № 51

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ. կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Բաժանորդագրութիւնք ղրկվում են այս հասցէի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի փոխադարձ կրեդիտի ընկերութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Մոսկվայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Յունաստան. Օտար լրագիրները հանգուցեալ կայսերի մասին. Ֆրանսիա.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մեր ժողովրդական գրականութիւնը.

ԹԻՖԼԻՍԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԿՐԵԴԻՏԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Ներկայ տարվայ վերջում կը լրանայ մեր քաղաքի փոխադարձ կրեդիտի ընկերութեան տաս տարվայ շրջանը:

Ինչպէս յայտնում է ընկերութիւնը իր յայտարարութեան մէջ, ներկայ մարտ ամսի 22-ին լինելու տարեկան ընդհանուր ժողովի մէջ, մի յանձնաժողով, որ ընտրված է եղել 1880 թ. մարտի 20-ի ընդհանուր ժողովի մէջ, կը ներկայացնի իր զեկուցումը ընկերութեան կանոնադրութեան մի քանի նշանաւոր կէտերի փոփոխութեան մասին:

Երբ 1872 թւին հիմնվեցաւ Թիֆլիսի փոխադարձ կրեդիտի ընկերութիւնը, նա ընդունեց այն կանոնադրութիւնը, որ այն ժամանակ ընդհանուր էր Ռուսաստանում եղած փոխադարձ կրեդիտի բոլոր բանկերի համար: Այն ժամանակից յետոյ այդ տեսակ հիմնարկութիւնների օրինակելի կանոնադրութիւնը նշանաւոր փոփոխութիւնների ենթարկվեցաւ, բայց մեր քաղաքի փոխադարձ կրեդիտի բանկը պահպանեց սկզբնական կանոնադրութիւնը, առանց մտցնելու այն փոփոխութիւնները, որոնք նորմալ ասված կանոնադրութեան մէջ մտցրած են եղել:

Տաս տարվայ ընթացքում Թիֆլիսի փոխադարձ կրեդիտի ընկերութիւնը բաւական օգուտներ տուեց մեր քաղաքի ֆինանսական և առևտրական շրջանների գործունէութեանը, բայց, պէտք է խոստովանել, նա չը տուեց այն նշանակութիւնը, որ կարելի էր սպասել երբ նա հիմնվում էր, չը վայելեց այն ժողովրդականութիւնը, որ կարող էր վայելել, եթէ տարածէր իր գործունէութիւնը աւելի մանր կրեդիտի պահանջ ունեցողների մէջ:

Դեռ երբ որ նոր էր հիմնվում այդ ընկերութիւնը մենք յայտնեցինք մեր միտքը առանձին յօդուածով, որի մէջ յոյս էինք յայտնում որ մեզ մօտ հիմնվող այդ բանկային հիմնարկութիւնը գլխաւորապէս ի նկատի կունենայ միջին և մանր կրեդիտի մէջ կարօտութիւն ունեցողներին:

Բայց դժբաղդաբար այսպէս չեղաւ. տաս տարվայ ընթացքում մեր փոխադարձ կրեդիտի բանկը իր համար նպատակ էր դրել նպաստել իր փոխառութիւններով գլխաւորապէս խոշոր կրեդիտի մէջ պահանջ ունեցողներին, իսկ ամեն տեսակ աշխատանք կրող, մանր կրեդիտի մէջ պահանջ ունեցող բազմութիւնը չը կարողացաւ մասնակից լինել այդ ընկերութեան գործունէութեան մէջ և դարձեալ մնաց այն վաշխառուների ճանկերում, որոնք հարստահարում են աշխատողին, նրան թէ աժագին տոկոսներով փող տալով, և թէ ուրիշ կողմից անհաշիւ տոկոսներ տալով նրա խնայողութիւններին:

Եւ շատ անգամ նոյն իսկ այն անձինք, որոնք համեմատաբար էժան կրեդիտ էին վայելում փոխադարձ կրեդիտի բանկում, իրանց կողմից մեծ տոկոսներով փոխ էին տալիս մանր աշխատողներին բանկի մէջ էժան տոկոսներով վեր առած գումարները:

Մի խօսքով մեր քաղաքի մանր աշխատողների բազմութիւնը տաս տարվայ շրջանում ոչինչ օգուտ չը տեսաւ փոխադարձ կրեդիտի ընկերութեան հիմնարկութիւնից: Նրա տեսած շահը, նրա ունեցած օգուտը մնաց դարձեալ մեր ունեւոր փոքրամասնութեան սեպհականութիւն:

Մենք չը գիտենք թէ ինչ տեսակ կը լինի ներկայ մարտի 22-ի ընդհանուր ժողովին մի տարի առաջ ընտրված յանձնաժողովի զեկուցումը, բայց չենք կարող մեր ցանկութիւնը չը յայտնել, որ կանոնադրութեան մէջ արած փոփոխութիւնների շարքում մտցրած լինէին այն կարևոր կէտերը, որոնք ապահովեն թէ տային քաղաքիս փոխադարձ կրեդիտի բանկին նպաստող լինել ոչ թէ միայն մեր ֆինանսական և առևտրական բարձր և միջին դասակարգերի համար կրեդիտը վայելելու, բայց և միջոց տային և քաղաքիս մանր աշխատողների աժագին մեծամասնութեանը վայելելու այդ կրեդիտը:

Տեսնենք մարտի 22-ի տարեկան ընդհանուր ժողովը ինչ վճիռ կը տայ մեր առաջարկած հարցին:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

Մարտի 12-ին

Շտապում եմ հաղորդել ձեզ այն երեք ազգասէր հիմնարկութեանց մասին, որոնք վերջապէս հաստատվեցան [illegible] կողմից և որոնց բարերար ազդեցութիւնը հասարակական ուսանողութեան վրայ շատ մեծ է լինելու.

Ամսիս 16-ին բացվելու է Մոսկվայի համալսարանի ուսանողական ճաշարանը (кухмистерская). Յայտնի է, որ վերջին ժամանակներս սաստիկ թանգութիւնը առանձին ծանրութեամբ ճնշել է և ճնշում է մանաւանդ քաղա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԷԹՆՈԼՕԳԻԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ.

«Великій врагъ знанія не ошибка, а бездѣйствіе.»

(Գիտութեան մեծ թշնամին սխալանքը չէ, այլ անգործութիւնը)

Бокль. Ист. Цив. Анг. Т II. гл. 6 стр. 452.

I. Երգարանների դրութիւնը

—

Մեր գրականութեան մէջ արդէն գոյութիւն ունեն մի քանի երգարաններ. Դուք կը տեսնէք «Մուսայք Հայաստանի», «Քնար Հայկական», «Աշխոյժ Հայաստանի» և այլ բազմաթիւ վերնագրեր կրող երգերի ժողովածուներ. Ինչպէս երևում է, այդ չնչին ժողովածուների կազմիչները, տալով իրանց աշխատանքներին այսպիսի հաւակնոտ անուններ, կամենում են, եթէ կարելի է այսպէս ասել, նրանց հայացնել, ազգայնացնել.

Ինչպէս կարելի է հայոց երգարանը չը կոչել «Աշխոյժ», «Քնար», կամ «Մուսայք Հայաստանի». Ինչպէս կարելի է արհամարհել տոհմիկ [illegible] երգը կամ անուշ ձայնը. Եթէ երգարանի [illegible] չը կրկնենք «Աշխոյժ», «Քնար» և «Հայաստան» բառերը, ուրիշ անունով ժողովածուները հայոց երգարանի [illegible] չեն կարող լինել ու հայ մարդու սրտի զգացմունքները չեն կարող արտայայտել. Վերը առէք, ընթերցող, այդ ժողովածուներից որը ցանկանում էք և ձեր աչքի առաջին կը բացվի մի հրաշալի բանաստեղծական աշխարհ. Դուք կը տեսնէք, ինչպէս պ. Գ. Փափազեանը [illegible] թէ ինչ տեսակ [illegible] է. ինչպէս պ. Շ....նը հայ ու մահ է [illegible] իր [illegible] ու [illegible] առաջ, ինչպէս հայ ազգային երիտասարդը [illegible], հեռի Հայաստանից, մեռնում է [illegible] հառաչանքը և սէրը. [illegible] իր սիրոյ—մարդկային [illegible]—հայ ազգին համար, որի պատմիչը [illegible] նրան [illegible] և երգում է մինչև [illegible] կարդալու լսել [illegible] բանաստեղծը կը տեսնէք ինչպէս հայոց [illegible] բանաստեղծական [illegible] ու զգայուն (сентиментальный) բանաստեղծական [illegible] և չը գտնելով մի [illegible] հայոց [illegible] մէջ, այդ [illegible] է թափում [illegible] Հայաստանի աւերակների և փառաւոր անցեալի վրայ և [illegible] կը [illegible] նրան և [illegible] այդ [illegible]. ընթերցող, որքան ազգասիրութիւն, որքան բանաստեղծութիւն և զգայուն (сентиментальный) սէր են պարունակում իրանց մէջ մեր երգերի ժողովածուները.

Եթէ դուք նկատում էք, [illegible] ու [illegible], [illegible] ու [illegible], [illegible] և [illegible] այս [illegible]. [illegible] տալով, որ նա չէ գրել մեր ազգը բանաստեղծական տաղանդից.

Բայց եթէ կամենաք գիտնալ յիշեալ երգարաններին, կազմել մի գաղափար մեր ժողովրդական բանաստեղծութեան մասին, կամենաք, օրինակի համար իմանալ՝ ինչպէս է «սիրում ու ատում» մեր ռամիկ ժողովուրդը, ինչպէս է գիւղացի երիտասարդը քաղցում առաջին համբոյրը իր սիրածի արևից այրված և [illegible] թշերից,—զուր շատ քիչ բան կարող էք գտնել մեր ժողովածուների մէջ. Նմանապէս, եթէ մի իրաւաբան-կանոնագէտ (ազգագէտ) կամենայ այդ ժողովածուների օգնութեամբ ուսումնասիրել մեր ժողովրդական կեանքը բացի բանաստեղծական, գիտէք թէ ծիսական, [illegible] և վերջապէս իրաւաբանական-կանոնագիտական կողմից,—նրա աշխատանքը կրկին պիտի ի զուր անցնի, որովհետև մեր ժողովածուները չեն պարունակում իրանց մէջ բանաստեղծին նիւթեր. Ճիշդ է կան մի քանի երգեր, բայց նրանք ժողոված են առանց քննադատութեան, առանց կրիտիկայի և մինչև անգամ լոգիկայի.

Ինչպէս երևում է մեր ժողովածուների [illegible] կազմիչները ենթարկված են մի և նոյն ցաւին, որով տանջվում են մեր իրաւաբանները. ինչպէս այս [illegible] գուցէ ծուլութիւնից, գուցէ անընդունակութիւնից և վերջապէս [illegible] անտարբերութեամբ են նայում մեր ազգային իրաւաբանական կեանքին,—չեն ուզում ուսումնասիրել մեր ժողովրդական «կանոնները» կամ ինչպէս ռամիկ ժողովուրդն է անուանում «մեծանոց (մեծաց) դրէք» (обычное право), ադաթները, ծէսերը,—նմանապէս էլ մեր երգարանների կազմիչները աւելորդ են համարում ուշադրութիւն դարձնել մեր ժողովրդական բանաստեղծութեան վրայ, ինչպէս հարկն է.

Երբ կը թերթէք մինչև վերջը բոլոր քաղցրաձայն թռչունները ու նուագարանները, որոնց անունով մկրտում են մեր ժողովածուները, գուցէ մի ժամանակ արժանանաք տեսնել, փոխանակ «Աշխոյժ»-ի, «Քնար»-ի, «Աղջամ Հայաստանի» կամ «Զուռնայ Հայկական»-ներ. Գուցէ այն ժամանակ մեր երգարանները նուագեն հայ բարբառով, զուարճացնելով մեր նուրբ ականջները, որովհետև «սազը», «զուռնէն», «թմբուկը» կամ «նաղարէն» աւելի հայկական են, քան թէ օրինակի համար Մուզայք, որոնց մեր երգարանների [illegible] կազմողները, քաշ տալով Ողիմպոսի [illegible], գերում են Հայաստան, որի հետ [illegible] և [illegible] մուզայք ոչինչ կապ չունեն.

Այս նկատողութիւնից յետոյ դառնանք մեր ժողովրդական կեանքին. Հայ ռամիկ ժողովուրդը ինչպէս և ամեն ազգ ունի իր գրականութիւնը. ժողովրդական գրականութիւնը կայանում է հետևեալ մասերից.

I. Բանաստեղծական, որը կազմում են զանազան երգեր պատմական-հերոսական, ծիսական, լիրիկական (лирическій), խրախճանական և այլն.

II. Առակաբանութիւններից, առասպելներից, առածներից, որոնք վերաբերում են ժողովրդի պատմութեանը և առանձնական անցքերին.

քի չքաւոր դասը և որանց չարքաշ—ուսանողներին, որովհետև 3 հազար ուսանողներից՝ 2 հազարը՝ կարելի է ասել՝ կարօտ է և հազիւ հազ է կարգադրում իր ապրուստը հոգալ՝ ձեռք բերելով ընդամենը ամսական 20—25 րուբլի (երբեմն էլի պակաս)։ Վայելուչ և արժանաւոր ճաշարանի կարօտութիւնը վաղուց զգալի էր չքաւոր ուսանողների համար։ Դեռ 1872 թ. փորձ փորձեցին մի փոքր ճաշարան (столовая) բաց անել 2 կամ 3 հարիւր մարդու համար, բայց այդ փորձը մի տարի էլ չը տևելով քանդվեցաւ. Ներսեցին ինչ որ անվայելչական պատճառներ.... Վերջապէս ներկայ լուսաւորութեան մինիստրի օրով թոյլ տրվեցաւ համալսարանի ուսանողներին բանալ ուսանողական ճաշարան՝ իրանց—ուսանողների անմիջական կարգադրութեամբ և կառավարութեամբ։ Այդ ճաշարանի համար դեռ անցեալ աշուն ներկայացուեց տուն և բաւականին փող ժողովեցին. բայց դրանից նոյն իսկ նպաստով համաձայնութիւն եղաւ ուսանողների մէջ.—Դանէ այժմ ուսանողը կարող է կուշտ փորով հաց ուտել և ուտել միս—այլ ոչ թէ Աստուած գիտէ ինչպիսի զզուելի խառնուրդ.... Ճաշարանի բացման օրը կը լինի վճռական։

Երկրորդը ուսանողական ընթերցարանն է (читальня)։ Աչքառու է, թէև համալսարանը ունի մատենադարան և Պետերբուրգի հասարակական մատենադարանից (публичная библіотека) յետոյ ամենահարուստը Ռուսաստանի մէջ, բայց նախ՝ մատենադարանում նստել—կարդալ չէ կարելի (բացի 3 ժամից) և երկրորդ՝ մատենադարանը չէ ստանում ուրիշ բոլոր լրագիրները։ Այս պատճառով դեռ անցեալ տարի խնդիր ծագեցաւ բանալ ուսանողական ընթերցարան՝ բոլոր ուսանողների կարգադրութեան ներքոյ։ Թոյլտուութիւնը վաղուց ստացած է և այս օրերս կը բացվի. ընթերցարանը կարող է բովանդակել մօտ 3 հարիւր ընթերցող և կը լինի նոյն իսկ համալսարանի շինութեան մէջ.—Ցանկալի էր, որ ուսանողներից կազմված ընթերցարանի վարչութիւնը ուշադրութիւն դարձնէ համալսարանում գտնուող ազգութեան պատկանող ուսանողների վրա (լեհացիք, հայեր, բուլղարներ, հրեայք և այլք) և ուրիշ ձեռք բերել դրանց ազգային գոնէ պարբերական հրատարակութիւնները։

Երրորդ հիմնարկութիւնն է—համալսարանական նահանգային դրամարկղները (товарищескія или губернскія кассы)։ Ինչպէս յայտնի է՝ մինչև Տոլստոյի ժամանակ որ և է ընկերական գանձարան, որ և է ուսանողական դրամարկղ չքաւոր ընկերներին օգնելու համար—սաստիկ հալածվում, արգելվում էր. յանցաւորները խիստ պատժի էին ենթարկվում. Բայց այնու ամենայնիւ ազգասէր ընկերներն օգնելու կարօտութիւնը միշտ և միշտ զգալի էր։ Վերջապէս յանձնվեց ամսից համալսարանական պրոֆեսորների խորհուրդը (совѣтъ) պէտք էր համարեց ընկերական դրամարկղների գոյութիւնը և այժմ թոյլ է տրված ուսանողներին՝ չքմեղներ կազմելով, դրամարկղ պահել. Նահանգային կամ ընկերական դրամարկղը կազմվում է այսպէս. ժողովվում են մի որ և է նահանգի գիմնազիոններում աւարտած ուսանողները, կազմում են կանոնադրութիւն—որ՛քան տուրք է նշանակվում իւրաքանչիւր անդամից և որքան նպաստ՝ կարօտ ուսանողին.—այս կանոնադրութիւնը ներկայացնում են համալսարանի խորհրդին 'ի հաստատութիւն. այնուհետև այդ ուսանողները ընտրում են պրոֆեսորներից մէկին իրանց հոգաբարձու, որ ներկայ է լինում ընդհանուր ժողովներին՝ իբրև նախագահ. մեր նիստերին—նա բացակայ է.—Պէտք է կարծել, որ՝ եթէ մի նահանգի ուսանողներին կարելի է միանալ և դրամարկղ կազմել՝ կարող են միանալ և մի քանի նահանգների ուսանողները—մանաւանդ, երբ որ դրանց թիւը առանձին առանձին առաւ՝ շատ փոքր է։ Այսպով ես ուզում եմ ասել, որ համալսարանի հայ ուսանողներին էլ, որոնց թիւը 60-ի չափ է և որոնք ժողովված են զանազան նահանգներից, կարող են միանալ և ընկերական դրամարկղ կազմել։ Եւ այս մանաւանդ անհրաժեշտ է, որ հայ ուսանողների մէջ օրէցօր աւելանում է կարօտեալների թիւը, որոնց անպատճառ պէտք է օգնել, դրամական նպաստ հասնել։—Այժմ լսեցի, որ համալսարանի պրոֆեսոր պ. Ն. Նիրուքեանցը վերադարձել է Փարիզից, ուր նա գնացել էր դեռ ամառը՝ ուսումնական պարապմունքների համար։ Պէտք է կարծել, որ հայ ուսանողները կաշխատեն օգուտ քաղել՝ մեր գիտնական հայրենակցի մասնակցութեամբ ընկերական դրամարկղի հարցը գլուխ բերելու։

Վերջացնելով նամակս, թոյլ եմ տալիս ինձ յուսալ, որ եթէ համալսարանի հայ ուսանողաց դրամարկղը հաստատվի—անտարբեր մնալու չեն դէպի այդ բարենպատակ գործը Մոսկվայի համալսարանի հին հայ ուսանողները՝ իրանց առատով դրամներից սակաւը կամ միանուագ օժանդակութիւն հասցնելով իրանց կարօտ և աղքատիկ հայրենակիցներին.... Կը յուսանք և կը սպասենք։

Նամակս վերջացրել էի, երբ յանկարծ հեռագիրը բերեց մի ցաւալի լուր. 11-ին մարտի՝ Փարիզում՝ ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանվել է բոլոր Եւրոպային յայտնի ռուս պիանիստ Նիկոլայ Ռուբինշտէյնը (կոմպոզիտոր Անտոն Ռուբինշտէյնի եղբայրը)։ Հանգուցեալը մի ամիս առաջ Մոսկվա էր և բոլորովին առողջ։ Պատմում են, որ երբ նա՝ հիւանդութեան օրերին (նա չարաչարւելով մեռաւ) գիտում է երևելի բժիշկ Զախարինին, սա ասել է հիւանդին. «դուք մի ամսից կը մեռնէք»։ Երևում է բժիշկներն էլ ասել են դրուստ խօսել.... Բայց Ռուբինշտէյնի մահը զարհուրելի մեծ կորուստ է բոլոր երաժշտասէրների համար։

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այն տեղի վրա Ս. Պետերբուրգում, որտեղ թագաւոր կայսրը ընկաւ չարագործի ձեռքից, պէտք է շինվի մի եկեղեցի, ինչպէս վճռել է Ս. Պետերբուրգի դուման։

—

Նորին կայսերական բարձրութիւն թագաժառանգ Նիկոլայ Ալէքսանդրովիչ նշանակված է Հէլսինգֆորսի համալսարանի կանցլեր, իսկ մինչև թագաժառանգի չափահաս լինելը, այդ պաշտօնը կը կատարի բարոն Շէրնվալ—Վալլէն։

—

Ս. Պետերբուրգից հեռագրում են Մոսկվայի լրագիրներին որ բարձր կառավարութեան մէջ հերթական երեք հարցեր են քննվում. ա. գիւղացիների ազատագրութեան մասին, բ. գիւղացիների հողային կալուածների մեծացնելու մասին և գ. անցագրերի սիստեմայի ոչնչացնելու մասին։

—

Ինչպէս յայտնի է Ֆինլանդիայի սահմանադրութիւնը շնորհվեցաւ Ալէքսանդր I կայսրի ձեռքով, այնուհետև նրա յաջորդ կայսրները, իրանց գահակալութեան օրը իրանց ստորագրութեամբ հաստատում էին Ալէքսանդր I-ի Ֆինլանդիային տուած այդ կոնստիտուցիան։ Այդպէս վաւերացրին այդ սահմանադրութիւնը կայսր Նիկոլայոս I. յետոյ կայսր Ալէքսանդր II և վերջապէս. ինչպէս կարդում ենք այժմ լրագիրներում, այս օրերս վաւերացրեց իր ստորագրութեամբ Ֆինլանդիային Ալէքսանդր I-ի շնորհված կոնստիտուցիան կայսր Ալէքսանդր III։

—

Շնորհակալութեամբ ստացանք Մոսկվայից. այդ քաղաքի հայ քահանայ Յարութիւն Պօպովեանցից նրա աշխատասիրած «Պատմութիւն նոր կտակարանի»։ Այդ գիրքը շատ լաւ կազմված է, գրված է գեղեցիկ, հասարակ ոճով, հասկանալի աշխարհաբար լեզուով։ Տպագրութիւնն էլ շատ մաքուր է։ Մեզ, առհասարակ, պակաս էին այդպիսի պատմութեան վրա ժողովրդական լեզուով գրված գրքեր։ Հայոց գրականութիւնը զուրկ լինելով աւետարանի աշխարհաբար լեզուով թարգմանութիւնից, քահանայ Պօպովեանցի գեղեցիկ աշխատանքը կարող է մասամբ բաւականացնել այն ընթերցողին, որ գրաբար լեզուն չէ տիրապետում. գոնէ այդ գրքից ընթերցողը կարող է ծանօթանալ Քրիստոսի պատմութեան հետ և աւետարանի վարդապետութեան գլխաւոր հիմունքների հետ։ Խորհուրդ ենք տալիս հայ հասարակութեանը ունենալ այդ գիրքը։ Գիրքը ունի 160 երես և իր ծաւալի համեմատ էլ շատ էժան է. Նրա գինը ընդամենը 60 կոպէկ է. Ցանկացողները կարող են գրել Մոսկվա հետևեալ հասցէով. Москва, домъ Армянской церкви, священнику Артемію Попову.

—

«Փորձ» ամսագրի փետրվար ամսի տետրակը այս օրերս հրատարակվեց։ Ահա տետրակի բովանդակութիւնը. I. Յակոբ Շահամիրեանցի մատենագրական գործունէութիւնը Հնդկաստանում տիկին Ս. Երիցեանի. II. Հայք և Հայաստանը օտարների աչքում, հրապ. դասախօս Արք. Յովհաննիսեանի. III. Շաւէն, Գ. Ռոզեանցի. IV. Ռուսիոյ հայոց վիճակագրութիւնը Ա. Երիցեանի. V. Վանեցու երգ Գ. Բարխուդարեանցի. VI. Աղուէս գրոց Յոհ. Բէջֆիլեանի. VII Ներսիսեան դպրոցի տարեգրութիւն. VIII Ստորագրութիւն. IX. Քաղաքական տեսութիւն. X. Դիբրանոցի «Դեղին աղբանոց» հայոց բանի վրա, իտալ. Գամիլ Երիթեանի. XI. Յայտարարութիւններ. Գ. Ա. Երիցեանցի յօդուածից Ռուսաստանի հայերի թիւի մասին, երևում է որ հայերի ընդհանուր թիւը Կովկասում և Անդրկովկասում 860.453 հոգի է, իսկ ամբողջ Ռուսաստանում 916.989 հոգի։ Հետաքրքիր է իմանալ, պ. Երիցեանը հաշւում է միմիայն լուսաւորչական հայերին, թէ նրանց մէջ հաշւում է և կաթոլիկ, բողոքական և մահմեդական հայերին։ Երևի չէ հաշւում։

—

Ստացանք Թիֆլիսեցի պ. Նազար Գրիգորեան Յարութիւնեանցից 10 րուբլ նրա տարեկան վճարը յօգուտ «Միացեալ ընկերութեան»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Աթէնքից անգլիական „Standard“ լրագրին հեռագրում են հետևեալը. Յունական զօրքերի գլխաւոր շտաբի երկու օֆիցերներ Աթէնքից ուղևորվեցան դէպի Թեսսալիայի սահմանները, որտեղ մի քանի ամրոցներ պէտք է կառուցանվին։ Թերմոպիլեան անցքը, Ակրինէյ գետը և նոա տըլմինը կէտեր են, որոնք պէտք է ամրացվին։ Մի նոր գինուոր ասել է թղթակցի հետևեալը. „Յունական նոր սերունդը թէ յարձակվելու և թէ պաշտպանվելու. մա-

---

III. Ասածներից և առածներից։

IV. Ժողովրդական «Մեծաց գիրքերից և կանոններից», որոնք ամփոփում են և գրկում են, եթէ կարելի է այսպէս ասել, ամբողջ դասի բոլոր իրաւաբանական կեանքը։

Ահա քանի մաս կարելի է բաժանել, գոնէ մեր կարծիքով, ժողովրդական գրականութիւնը։

Եթէ ժողովրդական բանաստեղծութիւնը ծանօթացնում է մեզ նրա սրտի զգացմունքների հետ, տալիս է միջոց ճանաչել և գնահատել նրա բանաստեղծական ձիրքը, եթէ հեքիաթական երգերը և աւանդութիւնները մեզ ծանօթացնում են նրա անցեալի հետ, առածները ընդհանրապէս արտայայտում են ժողովրդի փիլիսոփայական հայեացքը կեանքի զանազան երևոյթների և մարդկային միմեանց հետ յարաբերութիւնների վրա. իսկ «Մեծաց գիրքերը և կանոնները» ծանօթացնում են մեզ ազգի իրաւաբանական կեանքի և բարոյականութեան հետ, որովհետև ինչը իրաւաբանութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ բարոյականութեան (мораль) մի մասը կամ ճիւղը.—այն մասը, որի նպատակն է կարգաւորել մարդկային յարաբերութիւնները հասարակութեամբ ամէնքի համաձայնութեան սկզբունքների վրա։ Ուրեմն հետազօտել և ուսումնասիրել մի որ և իցէ ժողովրդի գրականութիւնը, նշանակում է թափանցել նրա հոգեկան, բարոյական և մտաւորական աշխարհը՝ ճանաչել նրա ոգին, որով բոլոր զգացմունքները և շարժումները, միով բանիւ նրա բոլոր կեանքը թէ փիլիսոփայական, թէ բարոյական և թէ բանաստեղծական։

Այս է պատճառը որ համեմատական ազգագրութիւնը (этнологія) գիտնականների բոլոր ուշադրութիւնը դարձնում է ոչ թէ միայն քաղաքակրթված, այլ և վայրենի ազգերի կեանքի վրա։ Այս է պատճառը որ դրական փիլիսոփայութեան (позитивная философія) բոլոր հետևողները և չամաչողները սկսած Գ. Սպենսերից, Մորգանից, Լէբբոքից, Տայլորից, մինչև Ժիրօ-Տելոնը, Բախոֆենը և Պոստը հետևում են մի և նոյն նպատակին, այն է համեմատա-պատմական մեթոդով (историко-сравнительный методъ) ուսումնասիրել զանազան ազգերի կեանքը թէ իրաւաբանական, թէ բանաստեղծական, թէ բարոյական և թէ տնտեսական կէտից, որպէս և գտնել այն պատճառական օրէնքները, որով կառավարվում են, զարգանում են և առաջ են ընթանում զանազան սօցիալական երևոյթները։ Ահա իսկ այս պատճառաւ մենք թոյլ ենք տալիս մեզ մեր իրաւունքների և առհասարակ կրթված դասի ուշադրութիւնը դարձնել մեր ժողովրդական կեանքի և գրականութեան վրա։

Եթէ վեր առնենք, օրինակի համար, մեր հայոց ընտանիքը և համեմատենք ուրիշ ազգերի ընտանիքի հետ, մենք կը տեսնենք՝ որ նա իր իրաւաբանական կազմվածքով շատ քիչ է զանազանվում հին յունաց, հռոմայեցոց և հնդկաստանցոց ընտանիքից։ Մեր միտքը պարզաբանելու համար, ցոյց ենք տալիս գիտնոց թէ գաղղիացոց երևելի պատմաբան և իրաւագէտ Ֆիւստել դը Կուլանժի օրինաւոր աշխատութիւնը «Հին հասարակութիւն» (La cité Antique)։ Կարդացէք այս աշխատութիւնը և դուք կը համոզվիք մեզ հետ։

II. Երգերի նշանակութիւնը

Դառնանք այժմ մեր ժողովրդական երգերին։ Մեր կրթված դասի մէջ կազմված է մի սխալ համոզմունք՝ իբր թէ մեր ռամիկ ժողովուրդը չունենալով առանձին բանաստեղծութիւն, երգում է թուրքերէն լեզուով, թէ մեր ժողովրդական երգերը ոչ մի միտք չեն արտայայտում և կազմված են զանազան նախադասութիւններից, որոնք ժողովված են միայն ոտերի ուղղութեան համար։ Այս կարծիքը բոլորովին սխալ է, կամ աւելի լաւ ասած զրպարտութիւն է, որը ի զուր տեղը բարդում են մեր ժողովրդական բանաստեղծութեան վրա։

Մենք մեր բարոյական պարտք ենք համարում բողոքել այսպիսի զրպարտութեան դէմ և յուսով ենք, մեզ կը յաջողվի, ապացուցանել հակառակը։

Ժողովրդական երգերի չը գնահատելու պատճառը այն չէ, որ նրանք չեն պարունակում զանազան մտքեր, այլ այն է, որ մենք ինքներս չենք հասկանում նրանց միտքը կամ թէ զարգացմամբ բարձր լինելով խստութեամբ ենք նայում երգերի վրա պահանջելով նոցա բանաստեղծական և փիլիսոփայական մտքեր։ Ճիշտ է ժողովրդական բանաստեղծութեան, երգերի մէջ պատահում են սխալ մտքեր և մութ տեղեր. բայց ասացէք խնդրեմ ինչ բանաստեղծի գրուածքի մէջ չէ կարելի գտնել սխալ և մութ մտքեր։ Միթէ կարելի է վեր առնել մի որ իցէ գրուածքի միայն թոյլ կողմերը, և այս հիման վրա դատապարտել և հերքել նրա նշանակութիւնը, բոլորովին մոռանալով նրա լաւ յատկութիւնները. Երմանավանդ էլ ժողովրդական գրականութեան և բանաստեղծութեան ուսումնասիրելու. ժամանակը մենք պարտ ենք ի նկատի ունենալ երկու սկզբունք. 1) խստութեամբ չը քննադատենք երգերի մէջ արտայայտած մտքերը և 2) պարտ ենք թափանցել ժողովրդի զգացմունքները և հասկանալ երգերի ներքին միտքը։

Միայն այսպիսի հետազօտութեամբ կարող ենք ճանաչել ժողովրդի ոգին և հասկանալ նրա սրտի բոլոր շարժմունքները և զգացմունքները. միայն այսպիսի կերպով կարող ենք գնահատել ժողովրդի բանաստեղծական ձիրքը և այլն։

Վեր առնենք մի քանի օրինակներ, որոնք պարզապէս ապացուցանում են՝ թէ մեր ժողովրդական երգերը երբեմն արտայայտում են երկակի և խոր փիլիսոփայական մտքեր։ Կարդացէք հետևեալ երգը, որ մենք բերում ենք «Արևելեան Հայաստանի» երգարանից.

«Գնացէք, տեսէք ինչն ա կերել մուկին։ Եկանք տեսանք կատուն ա կերել մուկին, մուկին կատուն ենք բարեկենդանք, մեզ բաժին տարէք։

Գնացէք, տեսէք՝ ինչն ա կերել կատուն.
Եկանք, տեսանք՝ շունն ա կերել կատուն և այլն։
Գնացէք՝ տեսէք, ինչն ա կերել շունն.
Եկանք, տեսանք՝ գայլն ա կերել շունն և այլն։
Գնացէք, տեսէք՝ ինչն ա կերել գայլն.
Եկանք, տեսանք՝ արջն ա կերել գայլն և այլն։
Գնացէք, տեսէք՝ ինչն ա կերել արջն.
Եկանք, տեսանք՝ փիղն ա կերել արջն և այլն։
Գնացէք, տեսէք՝ ինչն ա կերել փիղն.
Եկանք, տեսանք՝ թուրն ա կերել փիղն և այլն։